ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/195

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Մասնակից՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11721-2021 գրությամբ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.07.2021թ.-ի թիվ 39/02-28-493 գրության հիման վրա, 21.07.2021թ.-ին «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.07.2021թ.-ին:

22.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/195 համարի ծածկագիրը:

28.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 28.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 15.07.2021թ.-ի թիվ 39/02-28-493 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ. ի մայիսի 27-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի կարիքների համար ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 8-րդ չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Ի ՍԻ ԷՆԵԲՋԻ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01020365, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նանսենի փ., 19-118, Հեռ.՝ +(374)55-750-057, էլ. հասցե՝ info@ecenergy.am):

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 28.06.2021թ.-ին, «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին armeps համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81-4 ծածկագրով պայմանագրի

նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Հայտնում ենք, որ «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ փաստաթղթերը ստացվել են Հայփոստ ծառայության առաքման միջոցով 14.07.2021թ.-ին՝ 1 օր ուշացումով: Պատվիրատուին է ներկայացվել «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից միակողմանիորեն հաստատված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81-4 ծածկագրով պայմանագիրը 2 օրինակից, պայմանագրի ու որակավորման ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովը «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը 8-րդ չափաբաժնի մասով մերժել է:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ

26/26-1/11721-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ի Սի էներջի» ՍՊ ընկերությունը մասնակցել է Մետրոպոլիտենի ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81 մրցույթին, որի քարտուղարն է եղել Մ. Ղազարյանը: Բոլոր ծանուցումները ստացել ենք իրենից բացառությամբ պայմանագրի նախագծի, որը ստացել ենք Վարուժան էլոյանից 28.06.21թ, որտեղ գրված է եղել, որ մրցույթի քարտուղարը ինքն է: Պայմանագիրը տանելու համար զանգել ենք հրավերի համարով, սակայն անհասանելի էր: 02.07.21թ-ին պայամանագիր տարել ենք, բայց ասեցին քարտուղարը արձակուրդում է ասեցին հուլիսի 6-ից հետո զանգենք ճշտենք տեղում լինի բերենք, որ ստուգեն և տան ստորագրման: Մինչև պայմանագիրը ներկայացնելու վերջին օրը ամեն օր փորձել ենք և չենք կարողացել կապ հաստատել ուստի ստիպված պայմանագիրը ուղարկել ենք փոստի միջոցով, որ չզրկվենք պայմանագիր կնքելու իրավունքից:

Խնդրում ենք հաշվի առնել, որ մենք արել ենք հնարավոր ամեն բան և արդար չի լինի մեր կազմակերպությանը ներառել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, ուստի ակնկալում ենք Ձեր միջամտությունը խնդրին լուծում տալու և «Ի Սի էներջի» ՍՊԸ-ի բարի համբավը անհիմն պատճառաբանություններով չվարկաբեկելու համար՝ խոչընդոտելով վերջինիս և միջազգային գործընկերների հետ հարաբերություններին:

Առդիր մրցույթի հայտարարությունը, պայմանագրի նախագծի ծանուցումը և մեր փոստով ուղարկած նամակի հավաստիությունը հաստատող կտրոնը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 27.05.2021թ.-ին

հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ից 4-րդ, 7-ից 11-ևդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

iii. 17.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

iv. Պատվիրատուն 28.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանթային օրվա ընթացթում ստորագրել այն, ինչպես նաև ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Ծանուցման մեջ նշված ժամկետում պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Հաստատված պայմանագիրը 2 օրինակից պետք է ներկայացվի ուղեկցող գրության հետ միաժամանակ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 13-րդ պարբերությամբ սահմանված պահանջները:

v. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 121, կոդը՝ RR297940453AM/ համաձայն՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն 13.07.2021թ.-ին պատվիրված նամակով «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 78) ուղարկել է առաքանի:

vi. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 121, կոդը՝ RR297940453AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 14.07.2021թ.-ին, ժամը 13:49-ին:

vii. Հանձնաժողովի 14.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ (հրապարակվել է www.gnumner.am կայքում 15:34-ին) արձանագրվել է, որ «Ի Սի Էներջի»

ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում չեն ներկայացվել, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11721-2021 գրությամբ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 27.05.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ից 4-րդ, 7-ից 11-ևդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված Պատվիրատուն 28.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանթային օրվա ընթացթում ստորագրել այն, ինչպես նաև ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Ծանուցման մեջ նշված ժամկետում պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Հաստատված պայմանագիրը 2 օրինակից պետք է ներկայացվի ուղեկցող գրության հետ միաժամանակ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 13-րդ պարբերությամբ սահմանված պահանջները: Սակայն Հանձնաժողովի 14.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ (հրապարակվել է www.gnumner.am կայքում 15:34-ին) արձանագրվել է, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում չեն ներկայացվել, ինչով

պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 121, կոդը՝ RR297940453AM/ համաձայն՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն 13.07.2021թ.-ին պատվիրված նամակով «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 78) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 121, կոդը՝ RR297940453AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 14.07.2021թ.-ին, ժամը 13:49-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 28.06.2021թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 13.07.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ընդ որում, հարկ է նկատել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն Կարգի 45-րդ կետի հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությանն է դիմել 15.07.2021թ.-ի թիվ 39/02-28-493 գրությամբ, այն դեպքում, երբ 14.07.2021թ.-ին նույն գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը փոստի միջոցով ստացել է «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների տուժանքները:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակը կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 13.07.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11721-2021 գրությամբ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/195 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**